ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. մայիսի 22-ի թիվ 5/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Ի. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2013թ. մարտի 22 -ի թիվ 5/5 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի գործունեության տարեկան ծրագրի 6.6 կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի մարտի 19-ի թիվ 6/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝
«Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի նկատմամբ ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից հայաստանի հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի իրականացում:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Վերահսկողության ծավալը՝ Հետևյալ ծրագիրը համարվել է էական և ընդգրկվել է վերահսկողության մեջ՝

- Թունելի վերականգնման աշխատանքներ:
- **Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝** 01.01.2009թ.-ից մինչև ստուգման կատարման ժամկետի ավարտը:

Ստուգման կատարման ժամկետը՝ 22.10.2012 – 22.11.2012թթ..

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, կատարողական /ընտրանքային/ և համապատասխանության վերահսկողության տեսակները:

Ստուգումն իրականացվել է նաև փաստագրման և ֆիզիկական /չափագրում/ եղանակով:

Վերահսկողության արդյունքները

Ծրագրի (շին. աշխատանքներ) սկիզբը – 13.08.2010թ.

Ծրագրի ավարտը – մինչև 2018թ.

2010թ. սեպտեմբերից մինչև 2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ծախսվել է 4,737,618.9 հազ. դրամ: Այսպես.

2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների պայմանագրի գումարը կազմել է 1,139,779.14 հազ. դրամ և թվով 4 (հ.1- հ.4) կատարողական ակտերով իրականացվել է 1,079,683.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ կամ ԱԾՁԲ-10/34 պայմանագրով նախատեսված գումարից 60,096.1 հազար դրամով պակաս: Նշված գումարից 41,776.0 հազ. դրամ ծավալի աշխատանքներ 13.08.2010թ. ԱԾՁԲ-10/34 պայմանագրի թիվ 1 փոփոխությունով տեղափոխվել է 2011թ կատարվելիք աշխատանքների վրա, իսկ 18,323.0 հազ. դրամ ծավալի աշխատանքների չափով կատարվել են խնայողություններ, որը համաձայն պայմանագրի 5.3 կետի ենթակա է հավասարապես բաշխման Կապալառուի և պատվիրատուի միջև, որի արդյունքում 9,161.5 հազ. դրամ փոխանցվել է կապալառուի հաշվին:

Նշված հարցի ուսումնասիրությունից պարզվեց, որ ըստ պայմանագրի 5.3 կետի «Սույն պայանագրի կատարման արդյունքում կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է կողմերի միջև հավասարաչափ«, այսինքն մինչև պայմանագրի ավարտը, որի կատարման վերջնական ժամկետ է սահմանվել 2017 թվականը:

Այսպիսով, **9,161.5** հազ. դրամ գումարը ենթակա է կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման մինչև ծրագրի ավարտը:

Միաժամանակ ուսումնասիրվել է «Արփա-Սևան» թունելի հիմնական աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, համաձայն որի 102,617.4 հազ. դրամի աշխատանքներ /խորշեր, գծեր, ցանցեր – 91,321.4 հազ.դրամ և օդափոխության համակարգ - 11,285.7 հազ.դրամ/ պետք է իրականացվեր մինչև 15.11.2010թ-ը, սակայն մինչև պայմանագրի փոփոխությունը՝ 28.12.2010թ.-ը ուշացվել է 42օր: Պայմանագրի 6.2 կետի համաձայն «Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումը իրականացվում
է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ» կամ չի հաշվարկվել **2,154.9** հազ. դրամ (102,617.4 հազ.դրամ x 0.05% x 42օր):

2011թ. պայմանագրի գումարը կազմել է 2,431,835.9 հազ. դրամ և թվով 13 (հ.5 -հ.17) կատարողական ակտերով իրականացվել է 2,431,835.9 հազ. դրամի շինարարական աշխատանքներ և վճարվել նույն գումարի չափով:

2012թ. տարեկան պայմանագրի գումարը կազմել է 1,611,603.2 հազ. դրամ, սակայն հոկտեմբերի 1-ի դրությամբ թվով 7 (հ.18 - հ.24) կատարողական ակտերով իրականացվել է 1,226,100.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ և վճարվել նույն գումարի չափով:

2007թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության (Վարկառու) և Աբու-Դաբի զարգացման հիմնադրամի (հիմնադրամ) միջև կնքվել է վարկային համաձայնագիր: Ըստ համաձայնագրի հիմնադրամը նպատակ է հետապնդում աջակցել արաբական, աֆրիկյան, ասիական և այլ զարգացող երկրներին՝ տրամադրելով նրանց վարկեր իրենց տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար: Հիմնադրամը համաձայնվել է վարկավորել վարկառուին համաձայնագրում սահմանված պայմանների և դրույթների համաձայն 36,730,0հազ.դիրհամ (Արաբական միացյալ Էմիրությունների արժույթ), կամ 10,0 մլն. ԱՄՆ դոլար:

	Աշխատանքների անվանումը	հազ. ԱՄՆ դոլար	հազ.դրամ
1	Խորհրդակցական ծառայություններ	396.0	1,454.5
2	Կառուցման աշխատանքներ	8,604.0	31,602.5
3	Անակնկալ ծախսեր	1,000.0	3,673.0
	Ընդամենը	10,000.0	36,730.0

Վարկառուն պարտավորվում է վճարել տարեկան 3% տոկոսադրույք վարկի հիմնական գումարից:

Ծրագրի ընդհանուր նկարագիրը՝

Վերականգնել, վերանորգել և կառուցել 48կմ երկարությամբ «Արփա-Սևան» ջրատար թունելը, որի համար մշակվել է նախագիծ 27.0 մլն նախահաշվային արժեքով:

	Աշխատանքների անվանումը	Վարկային ծրագրով հազ. ԱՄՆ դոլար	Համաֆինանսավորում հազ.ԱՄՆ դոլար	Ընդամենը հազ.ԱՄՆ դոլար
1	Խորհրդակցական ծառայություններ	396.0	804.0	1,200.0
2	Կառուցման աշխատանքներ	8,604.0	13,246.0	21,850.0
3	Չնախատեսված ծախսեր	1,000.0	1,700.0	2,700.0
4	ԾԻԳ-ի գործունեության ընթացիկ ծախսեր 5 տարվա համար 250000x5	-	1,250.0	1,250.0
	Ընդամենը	10,000.0	17,000.0	27,000.0

2010թ. հուլիսի 14-ին կայացել է Աբու-Դաբի զարգացման հիմնադրամի աջակցությամբ «Արփա-Սևան» թունելի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար կապալառու կազմակերպության մրցույթի հայտերի բացումը:

Մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել 3 կազմակերպություններ՝

- «Բազենք» ՓԲ ընկերությունը

- «Սադե» բաժնետիրական ընկերության Հայաստանյան մասնաճյուղը

- «Արփա-Սևան» ԲԲ ընկերությունը:

Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 12,840,239.4 հազ.դրամ:

Աշխատանքների իրականացման համար «Բազենք» ՓԲ ընկերության կողմից առաջարկվել է 12,921,258.5 հազ.դրամ, «Սադե» բաժնետիրական ընկերության Հայաստանյան մասնաճյուղի կողմից 13,767,241.6 հազ.դրամ և «Արփա-Սևան» ԲԲ ընկերության կողմից 11,798,546.3 հազ.դրամ:

ՀՀ Կառավարությունը 2010 թվականի օգոստոսի 26-ի 1074-Ա որոշմամբ հաստատել է մրցույթի արդյունքները 11,798,546.3 հազ.դրամ արժեքով, մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչելով «Արփա-Սևան» ԲԲ ընկերությանը՝ արդյունքում «Պետական գնումների գործակալություն» ոչ առևտրային կազմակերպության և «Արփա-Սևան» ԲԲ ընկերության միջև 13.08.2010թ կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ԱՇՁԲ-10/34 պայմանագիրը, որի կատարման վերջնական ժամկետ է սահմանվում մինչև 2018 թվականը:

Նախագծով նախատեսված երկաթբետոնյա երեսարկը համեմատելով փաստացի կատարվածի հետ պարզվում է, որ A- տեսակի 84,2գծմ երեսարկ, 210,114.1հազ.դրամ արժեքով բետոնացվել է առանց պատվիրատուի և նախագծային կազմակերպության հետ համաձայնեցման, ինքնակամ՝ կապալառուի ցանկությամբ:

Աղյուսակի տեսքով ներկայացվում է երկաթ բետոնե երեսարկների իրականացման գծամետրերը, ըստ տեսակների:

A,B,C- տեսակի երկաթ բետոնե երեսարկներ				
Թվական	A-տեսակ	B-տեսակ	C-տեսակ	Ընդամենը
Ընդամենը ամփոփ ծավալաթերթով	497,6	482,6	755	1735,2
Փաստացի իրականացված երկաթ բետոնից երեսարկ A,B,C /կատարողական ակտով/				
Թվական	A- տեսակ	B-տեսակ	C-տեսակ	Ընդամենը
2010թ	156,0	30,0	0,0	186,0
2011թ	396,4	65,6	0,0	462,0
2012թ	29,4	95,0	45,0	169,4
Ընդամենը կատարողականով	**581,8**	**190,6**	**45,0**	**817,4**

Ծավալաթերթի առանձին կետերում նախատեսված են աշխատանքներ, որոնք բացակայում են նախահաշվում `

Օրինակ:

1. Ապամոնտաժված և քանդումից առաջացած բեռների տեղափոխում 11,5 կմ թափոնավայր:
2. Նախատեսված է 358,35 տն քաշով նոր և հին մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում:
3. Բաց է թողնված տարբեր կտրվացքով և մակնիշով 20508 մ էլեկտրական մալուխներ:
4. Կետ 7.15 բացակայում է մոնտաժվող և ապամոնտաժվող ուժային էլեկտրասարքավորումների ցանկը:
5. Մետաղը դիտարկվել է որպես շինարարական աղբ և նախատեսվել դրանց տեղափոխումը թափոնավայր՝ 11.5կմ հեռավորության վրա:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

«ՀԱՅԶՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ և «ԹՈՒՆԵԼ» ՍՊ ընկերություններում (կոնսորցիում) իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

- Համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆIV-11.05.04-97 նախագծային նորմերի 6.2-կետի՝ ստորգետնյա կառույցները շինարարության ընթացքում պետք է ապահովված լինեն հրատապ և հեռախոսային կապի միջոցներով, որը բացակայում է տվյալ նախագծի կազմում: Ըստ՝ РД-06-28-93 ղեկավար փաստաթղթերի, հեռախոսային կապի բացակայության դեպքում արգելվում է մարդկանց մուտքը թունելախորշ և սահմանված նորմի խախտման դեպքում պատասխանատվություն են կրում՝ պատվիրատուն, շինարարական կազմակերպությունը, նախագծողը, փորձաքննություն իրականացնողը և տեխնիկական հսկողը:

Նախագծով ընդունված է՝

- աշխատանքները կազմակերպել չորս հերթափոխով՝ վեց ժամ յուրաքանչյուր հերթափոխում,
- մեկ օղակի բանվորների քանակը 4 մարդ,
- աշխատանքային ճակատի երկարությունը 6.0մ, բոլոր տիպերի (A, B, C տիպի և վաքի) վերակառուցման աշխատանքների համար:

Ստուգումներից պարզ դարձավ, որ շինարարությունը իրականացվում է երեք հերթափոխով, նախագծով նախատեսված չորսի փոխարեն և յուրաքանչյուր հերթափոխում աշխատում են 18-ից 20 բանվոր:

Անահապաղ վերականգնվող ծրագրով նախատեսվում է թունելի առանձին հատվածներում իրականացնել 1735.2 գծամետր ընդհանուր երկարությամբ A, B և C տեսակների երկաթ բետոնե երեսարկ և 1725.2 գծամետր երկաթբետոնե հատակ:

«Արփա-Սևան» թունելի վերականգնման վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման, տեխնիկական հսկողության և ծրագրի իրականացման գրասենյակին աջակցման ծառայությունների գնման նպատակով 08.06.2009թ.-ին «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ և « Թունել» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքվել է թիվ ՄԲԾՁԲ-09/5 պետական գնման պայմանագիրը 319, 9 մլն դրամ արժեքով:

Հարկ է նշել, որ նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուի կողմից 23.02.2010թ կրկնակի անգամ տրվել է անկախ փորձաքննության «Հայնանոտեքնոլոջի» ՍՊԸ-ին, որը իր աշխատանքներում խորհրդատվության նպատակով ընդգրկել է ռուսական «Տրիդա հոլդինգ» կազմակերպությանը:

Փորձաքննության դրական եզրակացությունը Ե-N6 23.03.2010թ. նամակով ներկայացվել է պատվիրատուին:

Պատվիրատուի կողմից շինարարական մրցույթի առաջարկի քննարկման փուլում հաշվի չի առնվել կոնֆիդենցիալ նախահաշվի և մրցույթի հաղթող մասնակցի կողմից ներկայացված մի շարք շին. աշխատանքների միավոր գների զգալի տարբերությունները, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով՝

Նախահաշվով հաշվարկված և ծավալաթերթով ներկայացված միավոր գների համեմատական աղյուսակ

հազ. դրամ

Աշխատանքների անվանումը	Նախահաշվով հաշվարկված	Ծավալաթերթով նախատեսված	Գնային տարբերություն
Ժամանակավոր ամրակապեր	67,955.8	5,701.8	62,254.0
Թիվ 3 հորանի հորանաբակի վերանորոգում	99,895.7	29,139.5	70,756.2
Օդափոխության համակարգ	37,394.3	12,040.9	25,353.4
Կենտրոնական օդափոխության օդափոխիչ ВЦП-16, ВОД-11	1,945,726.9	35,131.1	1,910,595.8
Տրանսֆորմատորային խորշեր	39,399.4	12,799.23	26,600.2
III հորանի վերգետնյա օդափոխության շենք	20,204.35	5,983.9	14,220.5
Ընդամենը	**2,210,576.45**	**100,796.43**	**2,109,780.02**

Պատվիրատուի մոտեցումը ռիսկային է, քանի որ հաշվի է առնվել միայն մրցույթի հաղթողի կողմից ներկայացված ցածր գինը:

Մետաղական ամրակապերի վերաբերյալ

«Արփա-Սևան» ԲԲ ընկերության իրականացված հանդիպակաց ստուգումներով պարզվել է, որ «Արփա-Սևան» թունելում, ըստ կատարողական ակտերի, վերակառուցվող երեսարկների հատվածում՝ մինչև բետոնացման աշխատանքների իրականացումը ընկերության կողմից տեղադրվել են 653 հատ պողպատե մետաղական ամրակապեր՝195,72 տ քաշով:

Ըստ հաշվապահական տվյալների առաքվել է 653 կոմպլեկտ A, B և C տիպերի ամրակապեր ընդամենը 156,4 տ քաշով:

Արդյունքում թունելում շուրջ 39 տ պակաս քաշով նոր մետաղական ամրակապեր է տեղադրվել, որը ըստ ծավալաթերթի կազմում է 1354.5 հազ դրամ:

Ըստ նախագծի A, B, C տիպերի ժամանակավոր ամրակապերի պատրաստման համար օգտագործվում են հեծան երկտավրներ՝ համապատասխանաբար H14, H16 և H20 չափերի:

Հարկ է նշել, որ ընկերության մեխանիկական արտադրամասում որոշ ամրակապեր պատրաստվել և տեղադրվել են ուղղանկյուն մետաղյա խողովակներից՝ առանց նախագծի փոփոխության և ամրակապերի կոնստրուկցիայի ամրության հաշվարկի:

Պետական ֆինանսավորումով կառուցված շինություններ

Եղեգիսի կիրճում կառուցված բոլոր շենք շինությունները, արտադրամասերը չեն հանձնվել պատվիրատուին շահագործման, իսկ շին. հրապարակի հողամասից 3000քմ տարածքով հատված, որի վրա են գտնվում արտադրական շինությունների մի մասը, համաձայն սեփականության իրավունքի վկայականի, պատկանում է «Արփա-Սևան» ՓԲԸ-ին:

Վերոհիշյալ 3000քմ հողատարածքը գյուղական նշանակության հողատարածք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>Վերահսկողության արդյունքները</u>

Ըստ ծրագրի նախատեսված է վերականգնել, վերանորգել և կառուցել 48կմ երկարությամբ «Արփա-Սևան» ջրատար թունելը, որի համար մշակվել է նախագիծ 27.0 մլն նախահաշվային արժեքով: Վերջնական հաստատվել է թունելի Անհապաղ Վերակառուցման ծրագիրը, մրցույթի է ներկայացվել մշակված նախագիծը պակասեցված նախահաշվային արժեքով:

2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների պայմանագրի գումարը կազմել է 1,139,779.14 հազ. դրամ: Իրականացվել է 1,079,683.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ կամ պայմանագրով նախատեսված գումարից 60,096.1 հազար դրամով պակաս: Նշված գումարից 41,776.0 հազ. դրամ ծավալի աշխատանքներ 13.08.2010թ. ԱԾՁԲ-10/34 պայմանագրի թիվ 1 փոփոխությունով տեղափոխվել է 2011թ կատարվելիք աշխատանքների վրա, իսկ 18,323.0 հազ. դրամ ծավալի աշխատանքների չափով կատարվել են խնայողություններ, որը համաձայն պայմանագրի 5.3 կետի ենթակա է հավասարապես բաշխման Կապալառուի և պատվիրատուի միջև, որի արդյունքում 9,161.5 հազ. դրամ փոխանցվել է կապալառուի հաշվին:

Նշված հարցի ուսումնասիրությունից պարզվեց, որ ըստ պայմանագրի 5.3 կետի «Սույն պայանագրի կատարման արդյունքում կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է կողմերի միջև հավասարաչափ« մինչև պայմանագրի ավարտը, որի կատարման վերջնական ժամկետ է սահմանվել 2017 թվականը:

Այսպիսով, **9,161.5** հազ. դրամ գումարը ենթակա է կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման՝ մինչև ծրագրի ավարտը:

Նախագծով նախատեսված երկաթբետոնյա երեսարկը համեմատելով փաստացի կատարվածի հետ պարզվել է, որ A- տեսակի 210,114.1հազ.դրամ արժեքով, 84,2գծմ երկարությամբ երեսարկը բետոնացվել է առանց համաձայնեցված նախագծի, ինքնակամ՝ կապալառուի ցանկությամբ: Հարկ է նշել նաև, որ վերանորոգման աշխատանքները իրականացվել են առանց երկրաբանական հետազոտության:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

Ստուգումներից պարզ է դարձել, որ շինարարությունը իրականացվում է երեք հերթափոխով, նախագծով նախատեսված չորսի փոխարեն և յուրաքանչյուր հերթափոխում աշխատում են 18-ից 20 բանվոր:

Ծավալաթերթի առանձին կետերում նախատեսված են աշխատանքներ, որոնք բացակայում են նախահաշվում:

Պատվիրատուի կողմից շինարարական մրցույթի առաջարկի քննարկման փուլում հաշվի չի առնվել կոնֆիդենցիալ նախահաշվի և մրցույթի հաղթող մասնակցի կողմից ներկայացված մի շարք շինարարական աշխատանքների միավոր գների զգալի տարբերությունները:

Պատվիրատուի մոտեցումը ռիսկային է, քանի որ հաշվի է առնվել միայն մրցույթի հաղթողի կողմից ներկայացված ցածր գինը:

Մետաղական ամրակապերի վերաբերյալ

Ստուգումներով պարզվել է, որ թունելում շուրջ 39 տ պակաս քաշով նոր մետաղական ամրակապեր է տեղադրվել, որը ըստ ծավալաթերթի կազմում է 1,354.5 հազ դրամ:

Հարկ է նշել նաև, որ ընկերության մեխանիկական արտադրամասում որոշ ամրակապեր պատրաստվել և տեղադրվել են ուղղանկյուն մետաղյա խողովակներից՝ առանց նախագծի փոփոխության և ամրակապերի կոնստրուկցիայի ամրության հաշվարկի:

Պետական ֆինանսավորումով կառուցված շինություններ

Եղեգիսի կիրճում կառուցված բոլոր շենք շինությունները, արտադրամասերը չեն հանձնվել պատվիրատուին շահագործման, իսկ շին. հրապարակի հողամասից 3000քմ տարածքով հատված, որի վրա են գտնվում արտադրական շինությունների մի մասը, համաձայն սեփականության իրավունքի վկայականի, պատկանում է «Արփա-Սևան» ՓԲԸ-ին:
Վերոհիշյալ 3000քմ հողատարածքը գյուղական նշանակության հողատարածք է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պայմանագրի 5.3 կետը այսուհետ շարադրել հետևյալ կերպ.
   Ծրագրի ավարտին առաջացած գումարային խնայողությունները օգտագործել միայն թունելի ներսում շին. վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:
2. Խնայողություններից առաջացած գումարների հաշվին կատարվող աշխատանքները իրականացնել միայն համաձայնեցված նախագծի առկայությամբ:
3. Ձեռնարկել միջոցներ՝ վերահսկողության արդյունքում հայտնաբերված գումարները ՀՀ պետական բյուջե վճարելու ուղղությամբ: Վերականգնման ենթակա գումարները ՀՀ պետական բյուջե փոխանցելիս եկամտային հաշվի սկզբում նախապես նշել «096» կոդը:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետով սահմանված կարգով, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատ գրավոր տեղեկատվություն ներկայացնել հաշվետվության մեջ նշված խախտումները վերացնելու վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/5 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
18.323.0 հազ. դրամ ծավալի աշխատանքների չափով կատարվել են խնայողություններ, որը համաձայն պայմանագրի 5.3 կետի՝ ենթակա է հավասարապես բաշխման Կապալառուի և Պատվիրատուի միջև, որի արդյունքում 9,161.5 հազ. դրամ փոխանցվել է Կապալառուի հաշվին: Ըստ պայմանագրի 5.3 կետի՝ «Սույն պայմանագրի կատարման արդյունքում կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է կողմերի միջև հավասարաչափ», այսինքն, մինչև պայմանագրի ավարտը, որի կատարման վերջնական ժամկետ է սահմանվել 2017 թվականը: Այսպիսով, 9,161.5 հազ. դրամ գումարը ենթակա է կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման մինչև ծրագրի ավարտը:	2010 թվականի ընթացքում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների ընթացքում ստացվել էր 18.323 հազ. դրամի խնայողություն, որի 50%-ը՝ 9161.5 հազ. դրամը փոխանցվել էր Կապալառուին: ՀՀ Վերահսկիչ պալատի արձանագրության համաձայն՝ 9161.5 հազ. դրամ գումարը ենթակա է Կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման մինչև ծրագրի ավարտը՝ 2017 թվականը: Կապալառու կազմակերպության հետ առկա է պայմանավորվածություն՝ համաձայն որի նշված գումարը համաձայնեցված կարգով կծախսվի թունելում համապատասխան աշխատանքների իրականացման վրա: Այդ առումով պայմանագրում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:	Մինչև ծրագրի ավարտը գումարը ետ կգանձվի, ծրագրի ավարտից հետո ստացված խնայողությունները կբաշխվեն համաձայն պայմանագրի:
2010 թվականի ընթացքում 102617,4 հազ. դրամի աշխատանքներ կատարվել են օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետի խախտումով, որի համար հաշվարկվել է տույժ 2154,9 հազ. դրամի չափով:	Ընդունվել է:	Կապալառուի կողմից մարտ ամսվա ընթացքում կատարված աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարներից պակաս կվճարվի 2154,9 հազ. դրամ, իսկ գումարը կփոխանցվի ՀՀ պետբյուջեի համապատասխան հաշվեհամարին:
Նախագծով նախատեսված երկաթբետոնյա երեսարկը համեմատելով փաստացի կատարվածի հետ՝ պարզվել է, որ A տեսակի 210,114,1 հազ. դրամ արժեքով, 84,2 գծմ երկարությամբ երեսարկը բետոնացվել է առանց համաձայնեցված նախագծի:	Թունելի որոշակի հատվածներում հաճախակի առաջանում են անկանխատեսելի հետևանքներով հղի վթարային իրավիճակներ, փլուզվածքներ, որոնց վերացումը կատարվում է Պատվիրատու, Կապալառու և Խորհրդատու կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ քննարկման արդյունքում արված առաջարկությունների հիման վրա՝ մինչև համապատասխան նախագծային փոփոխություններ կատարելը:	Խորհրդատու կազմակերպության կողմից 84,2 գծմ երեսարկի A տիպով կառուցման համար փոփոխված նախագծերը կատարված և հանձնված են Պատվիրատուին: Ընդ որում, գումարի փոփոխություն չի եղել:
Շինարարությունն իրականցվում է երեք հերթափոխով, նախագծով նախատեսված չորսի փոխարեն, և յուրաքանչյուր հերթափոխում աշխատում են 18-ից 20 բանվոր:	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պատվիրատուն համաձայնել է Խորհրդատուի և Կապալառուի առաջարկության հետ՝ հաշվի առնելով, որ 11.5 կմ-ի վրա բանվորների և բեռների տեղափոխումը կատարվում է միայն մեկ կողմից և տևում է երկու ժամ:	Շինարարության ընթացքում աշխատանքների որակը չի տուժել:
Պատվիրատուի կողմից շինարարական մրցույթի առաջարկի քննարկման փուլում հաշվի չի առնվել կոնֆիդենցիալ նախահաշվի և	Մրցութային հանձնաժողովը գործել է «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի սահմաններում:	-

մրցույթի հաղթող մասնակցի կողմից ներկայացված մի շարք շինարարական աշխատանքների միավոր գների զգալի տարբերությունները: Պատվիրատուի մոտեցումը ռիսկային է, քանի որ հաշվի է առնվել միայն մրցույթի հաղթողի կողմից ներկայացված ցածր գինը:		
Ստուգումներով պարզվել է, որ շուրջ 39 տն պակաս քաշով նոր մետաղական ամրակապեր են տեղադրվել, որը, ըստ ծավալաթերթի, կազմում է 1,354.5 հազ. դրամ:	Ընդունվել է:	Կապալառուի կողմից մարտ ամսվա ընթացքում կատարված աշխատանքների դիմաց պակաս կվճարվի և ՀՀ պետբյուջե կփոխանցվի արձանագրված գումարը՝ 1354.5 հազ. դրամի չափով:
Ծավալաթերթի առանձին կետերում նախատեսված են աշխատանքներ, որոնք բացակայում են նախահաշվում՝ օրինակ՝ 1. Ապամոնտաժված և քանդումից առաջացած բեռների տեղափոխում 11.5 կմ թափոնավայր: 2. Նախատեսված է 358,35 տն քաշով նոր և հին մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում: Մետաղը դիտարկվել է որպես շինարարական աղբ և նախատեսվել դրանց տեղափոխումը թափոնավայր՝ 11.5 կմ հեռավորության վրա: 3. Բաց է թողնված տարբեր կտրվածքով և մակնիշով 20508 մ էլեկտրական մալուխներ: 4. Կետ 7,15 բացակայում է մոնտաժվող և ապամոնտաժվող ուժային էլեկտրասարքավորումների ցանկը:	1. «Թափոնավայր» բառը վրիպակ է նախագծում, 11.5 կմ երկարությունը թունելում շինարարական տեղամասի հեռավորությունն է Եղեգիսի շինարարական բազայից: 2. 358.35 տն քաշով մետաղական ամրակապերը էլեկտրաքարշերով թունելից դուրս բերելը հնարավոր է միայն, երբ տեղափոխվող էլեմենտի քաշը չի գերազանցում 50 կգ-ը, և ապահովվում են համապատասխան չափերը: Արդյունքում դա սև մետաղի ջարդոն է և պահեստավորվում է Եղեգիսի շինհրապարակում: Ժամանակ առ ժամանակ կներկայացվի վաճառքի: 3. Մալուխների քանակների և տիպերի բազմազանությունից ելնելով՝ նշվել են միայն նախահաշիվներում, բացատրագրերում և գծագրերում: 4. Նշված են բացատրագրերում և գծագրերում:	-
Համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆIV-11.05.04-97 նախագծային նորմերի 6,2 կետի՝ ստորգետնյա կառույցները շինարարության ընթացքում պետք է ապահովված լինեն հրատապ և հեռախոսային կապի միջոցներով, որը բացակայում է տվյալ նախագծի կազմում:	Կապալառուի հետ քննարկվել և ձեռք է բերվել համապատասխան պայմանավորվածություն՝ ս/թ սեպտեմբեր ամսին «Արփա-Սևան» թունելում շինարարական-վերականգնման աշխատանքները սկսելիս շինարարական տեղամասը կապի միջոցներով ապահովելու համար:	Թունելով ջրի տեղափոխումը դադարեցնելուց հետո հարցը լուծում կստանա:
Եղեգիսի կիրճում կառուցված բոլոր շենք-շինությունները, արտադրամասերը չեն հանձնվել պատվիրատուին շահագործման, իսկ շինհրապարակի հողամասից 3000 քմ տարածքով հատված, որի վրա են գտնվում արտադրական շինությունների մի մասը, համաձայն սեփականության իրավունքի վկայականի, պատկանում է «Արփա-Սևան» ԲԲԸ-ին: Վերոհիշյալ 3000 քմ հողատարածքը գյուղական նշանակության հողատարածք է:	Շենք-շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները շարունակելու և ավարտին հասցնելու նպատակով անհրաժեշտ է կատարել շենք-շինությունների և հողատարածքի քարտեզագրման և չափագրման աշխատանքներ: «	«ԱՍԹՎ ԾԻԳ» ՊՀ-ի տարեկան ծախսերի նախահաշվում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություն:
Պայմանագրի 5.3 կետն այսուհետ շարադրել հետևյալ կերպ՝ 1. Ծրագրի ավարտին առաջացած գումարային խնայողություններն օգտագործել միայն թունելի ներսում շին. վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: 2. Խնայողություններից առաջացած գումարների հաշվին կատարվող աշխատանքներն իրականացնել միայն համաձայնեցված նախագծի առկայությամբ:	Ընդունվել է:	Կապալառուի հետ կնքված գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Վերահսկիչ պալատի կողմից արված առաջարկությունները գտնվում են Կապալառուի հետ քննարկման փուլում: